


ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԵԱՆ  
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

Ժամանակ առ ժամանակ պետք է խնդրենք Տիրոջմէ, որ նորոգէ մեր մէջ մարդասիրութեան հոգին, որովհետեւ եթէ անիկա չնորոգուի՝ ժամանակի ընթացքին կը նուազի եւ ապա ամբողջութեամբ կը նուաղի: Քրիստոսի հետեւորդը սակայն, պետք է աննուազ ու աննուաղ սիրով սիրէ իր նմանը որ նմանութիւնն է Աննմանին: Կարելի չէ սիրել Աննմանը եւ անտեսել մեր նմանը: Կարելի չէ սիրել Արարիչը եւ չսիրել արարածը: «Ով որ գԱստուած կը սիրէ, պետք է իր եղբայրն ալ սիրէ» (Ա. Յովհ. 4.21): Տեսանելի մեր եղբոր հանդէպ մեր սէրը՝ անտեսանելի Աստուծոյն հանդէպ մեր սիրոյն ապացոյցն է (Ա. Յե. 4.40): Որովհետեւ, «ով որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ, ի՞նչպէս կրնայ սիրել գԱստուած՝ որ չի տեսնուիր» (Ա. Յե. 4.20): Մեր մարդասիրութիւնն է, որ կ'ապացուցանէ, որ մենք Աստուծոյ գաւակներն ենք (Ա. Յե. 3.10): Մեր մարդասիրութիւնը ապացոյց մըն է նաեւ, որ մենք մահէն կեանքի անցած ենք (Ա. Յե. 3.14): Եւ որպէսզի մեր սէրը մեր եղբոր ու քրոջ նկատմամբ անկատար չըլլայ, մեզի կը պատուիրուի մեր նմանը սիրել մեր անձին պէս (Ղկ. 10.27: Հո. 13.9): Ոչ ոք ինքզինքն կեղծ սիրով մը կը սիրէ: Յակոբոս առաքեալ մեր ընկերը մեր անձին պէս սիրելը կը կոչէ՝ «Սուրբ գիրքին թագաւորական օրէնքը» (Յկ. 2.8): Իսկ Պօղոս կը յիշեցնէ մեզի, թէ իր ընկերը իր անձին պէս սիրողը լրիւ Օրէնքը գործադրած կ'ըլլայ (Գղ. 5.14: Հո. 13.10): Քրիստոսի կեանքին նայիմէ եւ իրմէ սորվինք մեր ընկերը մեր անձին պէս սիրել (Ա. Թս. 4.9):

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
Ս. ՊԱՏԱՐԱԳ




ՊԼՏՎՐԼԴԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀՎՏԱՆՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ  
ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ժողովուրդը եւս իր հոգին պէտք է ցօղուէ, որպէսզի պայծառ մտքով ու հաւատքով, մաքուր սիրտով, սրբութեամբ ու երկիւղով ընկալէ խորհուրդը, եւ ահաւասիկ կատարելութեան առաջնորդող սարկաւազին դաստիարակիչ թելադրութիւններն են, որոնք Ս. Խորանէն ժողովուրդին կ'ուղուին.- «Մանաւանդ հաւատքով, սրբութեամբ եւ երկիւղով աղօթքի կանգնիք Աստուծոյ այս Ս. Սեղանին առջեւ, եւ ո՛չ թէ՛ գայթակղալից խիղճով, նենգութեամբ, երկմտութեամբ ու թերահաւատութեամբ, այլ՝ ուղիղ վարքով, պարզ միտքով, անկեղծ սիրտով, կատարեալ հաւատքով, սիրով լեցուած եւ ամէն տեսակի բարի գործերով հարստացած աղօթքի կանգնիք Աստուծոյ այս Ս. Սեղանին առջեւ, եւ մեր Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի յայտնութեան օրը, Երկրորդ Գալստեան ատեն, ողորմութիւն գտնենք իրմէ: Տէրը թող փրկէ մեզ եւ ողորմէ»:...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 16 ՅՈՒՆԻՍ 2024 ԹԻՒ 24

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
Ես. 1.21-31 Հո. 7.25-8.11 Մատթէոս 12.38-45

**ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԷՏԱՐԱՆԸ  
ԸՍՏ ՄԱՏՔՈՍԻ 12.38-45**


Այն ատեն օրէնքի ուսուցիչներն եւ Փարիսեցիներն ոմանք ըսին Յիսուսի. «Վարդապէ՛տ, կ'ուզենք, որ հրաշք մը գործես»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ անհաւատարիմ չա՛ր սերունդ: Նշան մը կ'ուզէք, բայց Յովնան մարգարէին պատահած հրաշքէն զատ ուրիշ նշան պիտի չտեսնէք: Եւ ինչպէս Յովնան երեք օր ցերեկ ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ անցուց, նոյնպէս ալ մարդու Որդին երեք օր ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը Նինուէցիները ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզչութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, Դատաստանի օրը Հարաւի Թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս: «Երբ չար ոգի մը դուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անջրդի վայրեր կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չգտնէ, ինքնիրեն կ'ըսէ. “Ելլեմ երթամ իմ տունս, ուրկէ ելայ”: Ուստի կը վերադառնայ իր նախկին տունը եւ զայն կը գտնէ պարասպ, մաքուր եւ յարդուած: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի չար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէք, որ նոյնը պիտի պատահի նաեւ այս չար սերունդին»:

Այսօր մենք կ'ուզե՞նք հրաշք տեսնել: Հրաշքը ամէն օր կը պատահի մեր կեանքին մէջ: Մենք որքանո՞վ կը տեսնենք կամ պատրաստ ենք տեսնելու այդ հրաշքները: Պատրաստ պէտք է ըլլայ մեր հոգին, զօրաւոր պէտք է ըլլայ մեր հաւատքը, այն ատեն անպայման պիտի տեսնենք Աստուծոյ հրաշքները:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ԳԻՏ ՆՇԽԱՐԱՅ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՍԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԲՈՐԶԻ



Ս. Գրիգոր Լուսաւորիչ, լման քաւորոյ դար մեծ արդիւնաւորութեամբ կառավարել է ամրացնել յետոյ Հայոց եկեղեցին, առ Աստուած փոխադրուեցաւ 326-ին՝ իր առանձնացումի շրջաններէն մէկու ընթացքին եւ ոչ ոք լուր ունեցաւ իր մահէն: Հովիւներ՝ գտնելով անոր մարմինը, թաղեցին զայն առանց գիտնալու, թէ որո՞ւն մարմինն էր: Տարիներ յետոյ յայտնուեցաւ անոր թաղման տեղը եւ ընդ-խարները եւ մեծ հանդէտով փոխադրուեցաւ ու թաղուեցաւ Թորդան աւանը:

Հայաստանեայց եկեղեցին ներկայիս երեք անգամ կը կատարէ Սուրբին յիշատակը.

- 1.- Զարչարանաց եւ Մուսնի վերայ անունով՝ Մեծ Պահոց Զ. Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը:
- 2.- Ելն ի Վիրապէն՝ Տօն Կաթողիկէ Ա. Էջմիածնի նախորդ Շաբաթ օրը:
- 3.- Գիւտ Նշխարաց՝ գկնի Հոգեգալըստեան Դ. Կիրակիի նախորդ շաբաթ օրը: Երեք տօներն ալ ունին իրենց նախընթաց շաբաթապահները: Օտար եկեղեցիներ կը տօնեն զայն Սեպտեմբեր 30-ին: Ըստ Տօնացոյցին, այս տարի Գիւտ Նշխարաց տօնը կը գուգադիպի Շաբաթ, 15 Յունիս 2024-ին:

# ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

## ԻՆՉ Է ՅՍԿՈՒՄԸ

Հաւատացեալ ժողովուրդին համար Մեծ Պահոց շրջանը կը յատկանշուի նաեւ հսկումի արարողութիւններով:

Հսկումը արեւնամուտէն ետք կատարուող եկեղեցական այն արարողութիւնն է, որ հաւատացեալները կը համախմբէ, հոգիի արթնութեան որպէս գրաւական՝ աղօթքով եւ ներհայեցողական խորասուզումով հաշտեցնող կատարելու այն առօրեային, որ արդէն իսկ իր վախճանին հասած է, եւ զԱստուած պաշտել՝ բոլոր այն պարգեւներուն եւ բարիքներուն համար զորս, որպէս բարեբեր անձրեւ ջրտուքի ենթարկած է անապատացած մեր սիրտերն ու հոգիները:

Հսկումը առհասարակ մեծ տօներուն եւ եկեղեցներուն նաւակատիքներուն կատարուող արարողութիւն մըն է, յաջորդ օրուան Գիշերային ժամերգութեան կատարմամբ:

Բայց, ինչ որ մեր ժողովուրդին ծանօթ է, այդ Մեծ Պահոց ընթացքին կատարուող Խաղաղական եւ Հանգրստեան ժամերգութիւններն են, որոնք յիրաւի սրբազգեաց Շնորհալի Հայրապետին հոգեւոր երգերով եւ եռամեծար Սուրբ Նարեկացի Վարդապետի հոգեթաթախ աղօթքներով կը պայծառակերպեն հաւատացեալներուն սիրտերն ու հոգիները:

Հսկումի ժամերգութիւնը գիշերային խաղաղութիւնը կը ցօղէ առօրեայէն պարտասած մարդոց հոգիներուն վրայ: Ապա անոնք իրենց տունները կը մեկնին խաղաղութեամբ՝ հանգստանալու:

# ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

## ԹՎԱԿՐԳ ԼԱՐՈՂՆԵՐԸ ԲՈՆՈՒԵՅՈՒՆ ԹՎԱԿՐԳԻՆ ՄԷՋ

Մեծն պգտիկ բոլորն ալ մէկ առ մէկ հեռացան: Քանի մը հաստատումներ եւս: Առաջին, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները Յիսուսին եւ Յիսուսի շուրջ հաւաքուած ժողովուրդին կ'ուզէին ցոյց տալ, թէ իրենք անմեղ էին եւ հակառակ մեղքին, բայց Յիսուսի խօսքը՝ «Ձեր մէջէն անմեղը թող ինք առաջին քարը նետէ անոր վրայ», հրապարակեց անոնց մեղքերն ու մեղաւորութիւնը ամէնուն դիմաց եւ խայտառակ ըրաւ զանոնք: Երկրորդ, եթէ կ'ինք օրէնքը խզած էր շնութիւն ըրած ըլլալուն համար, ապա Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները իրենք եւս Օրէնքը խզեցին՝ քանի չկրցան զայն քարկոծել: Իբրեւ Օրէնքի պաշտպաններ եկան՝ իբրեւ Օրէնքը խզողներ փախան: Երրորդ, եկան Տէրը ծուղակի մէջ ձգելու՝ իրենք ինկան իրենց լարած ծուղակին մէջ:

## ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Դատապարտելու եկած անձերը՝ դատապարտուած մեկնեցան: Ուստի, զգուշանանք ուրիշները դատապարտելէ, որպէսզի չդատապարտուինք: ՏԵՐ, ԶՕՐԱՅՈՒՐ ՄԵՋ ՄԵՐ ՀԱՄԱՏԵՐՆ ՄԷՋ:

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

## ԵԹԷ ՄԵՂՔԵՐԵՂ ՍՐԲՈՒԵԼՈՒ

### ՅԱՆՎՈՒԹԻՒՆ ՈՐՆԵՍ ԿԱՐՎ՝ ՍԱՂԱՌՈՍ 25

Տիրոջն է երկիրը՝ իր ամբողջ լիութեամբ, աշխարհը՝ իր բնակիչներով: Որովհետեւ ինք անոր հիմերը դրաւ ծովերուն վրայ, ովկիանոսներուն վրայ հաստատեց զայն: Ո՞վ արժանի է Տիրոջ լէռը ելլելու, ո՞վ կրնայ անոր սուրբ տաճարին մէջ կանգնիլ: Ան՝ որ մաքուր է իր գործերով ու մտածումներով, ան՝ որ ստութեան անձնատուր չէրաւ, եւ նենգութեամբ երդում չըրաւ: Այնպիսին Տիրոջմէ օրհնութիւն պիտի ստանայ, արդարութիւն պիտի գտնէ զինք փրկող Աստուծմէն: Այսպէ՛ս կ'ըլլայ աստուածապաշտը, որ կ'ուզէ քու ներկայութեանդ գայ, ո՞վ դուն՝ Աստուածը մեր հայրերուն: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: -Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: - Տէ՛րն է, հօր եւ անպարտելի, Տէ՛րը, պատերազմի մէջ անխորտակելի: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: - Ամենակալ Տէ՛րը, ինքն է փառաւոր Թագաւորը:

Միասնաբար աղօթենք կարդալով Սաղմոսագիրքը: